

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԲԺՇԿԱԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ» ԱՄԲԻՈՆԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՏԱՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԸՍՏ ԱՄԲԻՈՆԻ 2020-2025 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ

Դասընթացներ

«Բժշկական սաբանական առարկաների» ամբիոնը գործում է «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» ֆակուլտետների կազմում՝ անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով:

Ամբիոնն իրականացնում է հետևյալ մասնագիտական առարկաների դասավանդումը՝

N	Առարկա	Ֆակուլտետ
1.	Հյուսվածաբանություն, Էմբրիոլոգիա, բջջաբանություն	Բուժական Ստոմատոլոգիական
2.	Մարդու անատոմիա	Բուժական Ստոմատոլոգիական
3.	Կենսաբանություն	Բուժական Ստոմատոլոգիական
4.	Տոպոգրաֆիկ անատոմիա և օպեր. վիր	Բուժական Ստոմատոլոգիական
5.	Նորմալ ֆիզիոլոգիա	Բուժական Ստոմատոլոգիական
6.	Մանրէաբանություն, վիրուսաբանություն, իմունոլոգիա	Բուժական Ստոմատոլոգիական
7.	Ախտաբանական անատոմիա	Բուժական Ստոմատոլոգիական
8.	Ախտաբանական ֆիզիոլոգիա	Բուժական Ստոմատոլոգիական
9.	Դատական բժշկություն	Բուժական Ստոմատոլոգիական
10.	Էմբրիոլոգիա /ընտրովի/	Բուժական

2021-2022 ուս.տարում ամբիոնի աշխատանքների ուսումնական ծավալը կազմել է **6963 ժամ:**

Դասախոսների կողմից ուսումնական ծանրաբեռնվածությունը կազմել է **5732 ժամ:**

Դասախոսական և ուսումնառական կազմը

Ամբիոնն ապահովված է համապատասխան որակյալ մասնագետներով և 2021-22 ուս.տարում ունեցել է թվով 13 աշխատակից, որից՝

- գիտությունների դոկտոր, պրոֆեսոր – 1,
- գիտությունների թեկնածու, դոցենտ- 2,

- գիտությունների թեկնածու – 4,
- դասախոս- 5,
- ուսումնաօժանդակ -1:

Պրոֆեսորադասախոսական կազմի միջին տարիքը՝ 42 տարեկան: Դասախոսները գերազանց տիրապետում են անգլերենին՝ օտարալեզու խմբերում դասախոսություններ անց կացնելու համար:

«Կենսաբանություն» առարկան դասավանդող դասախոս, կ.գ.թ., դոցենտ Ի. Բագուկյանը, «Ախտաբանական անատոմիա» դասընթացի մասնագետ Հ. Բարսեղյանը և «Մանրէաբանություն, վիրուսաբանություն, իմունոլոգիա» դասընթացի մասնագետ, կ.գ.թ. Ա. Մարգարյանը 2021-22 ուս. տարում չեն շարունակել դասավանդել ԱԲՀ «Բժշկականաբանական առարկաների» ամբիոնում՝ այլ աշխատանքի ընդունվելու կամ ծանրաբեռնվածության պատճառով:

- «Կենսաբանություն» դասընթացը դասավանդել է կ.գ.թ., դոցենտ Գ.Մ. Արաջյանը: Ֆիզիկական արձակուրդի անցնելու պատճառով նրան փոխարինել և մայիս ամսվանից առաջին կուրսերին «Կենսաբանություն» է դասավանդել կ.գ.թ. Իվան Գաբրիելյանը:
- «Մանրէաբանություն, վիրուսաբանություն, իմունոլոգիա» դասընթացի նոր մասնագետը՝ կ.գ.թ. Դ.Ռ. Սողոմոնյանը, համատեղել է ԱԲՀ-ում դասավանդումն իր՝ ՀՀ ԱՆ «Պրոֆ. Ռ.Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի «Մանրէաբանական և արտադրանքի որակի վերահսկողության» լաբորատորիայում աշխատանքի հետ:
- «Ախտաբանական անատոմիա» դասընթացը դասավանդել է Հուրի Սիրաեղարյանը, ով համատեղել է ԱԲՀ-ում դասավանդումն իր՝ «Հիստոլոգիա» պաթոլոգիայի հայ-գերմանական գիտագործնական կենտրոնում աշխատանքի հետ:
- «Դատական բժշկություն» առարկան այս ուս.տարում (աշնանային կիսամյակ) դասավանդվել է համալսարանի երկու մասնագետների՝ Ա.Ս. Խաչպանյանի (բուժական ֆակուլտետ) և Հ.Ս. Հովհաննիսյանի (ստոմատոլոգիական ֆակուլտետ) կողմից:
- «Տեղագրական անատոմիա» առարկան ևս այս ուս.տարում դասավանդվել է համալսարանի երկու մասնագետների՝ Բ.Գ.Դ., պրոֆ. Ա.Լ. Մինասյանի և Բ.Գ.Թ. Է. Ավագյանի կողմից:
- «Էմբրիոլոգիա» ընտրովի դասընթացը (բուժական ֆակուլտետ, գարնանային կիսամյակ) դասավանդել է ամբիոնի վարիչ, կ.գ.թ. Ն.Գ. Հունանյանը:

Ամբիոնի ուսումնագիտական ռեսուրսները

- 2021-2022 ուսումնական տարում ուսումնական գործընթացն արդեն կազմակերպվել է առկա ձևաչափով:
- ԱԲՀ-ի գլխավոր մասնաշենքում առկա են համապատասխան մասնագիտացված կաբինետներ, լսարաններ և լաբորատորիաներ՝ ամբիոնում դասավանդվող առարկաների արդյունավետ դասավանդման համար: Դասախոսության համար նախատեսված լսարանները հագեցած են անհրաժեշտ տեսացուցադրման տեխնիկայով (համակարգիչ, պրոյեկտոր և այլն): Լաբորատոր և գործնական պարապմունքների համար նախատեսված

մասնագիտացված կաբինետներում կան սարքավորումներ, նյութեր, գործիքներ և միկրո-, մակրոպատրաստուկներ:

- 2021թ հունվար-փետրվար ամիսներին ձևավորված հանձնաժողովն ԱԲՀ ամբիոնների՝ վերջին **3 ուս տարիների գործունեության մշտադիտարկում իրականացրեց**, որի ընթացքում «Բժշկական սաքանական առարկաների» ամբիոնի կողմից բարձրացվեցին նաև առկա խնդիրները, դրանք արձանագրվեցին. ամբիոնը նյութատեխնիկական բազայի համալրման անհրաժեշտություն ունի (**ՀԻՄՔ՝ ՈԱ, արձանագրություն 6, 07.04.2022թ.**):
 1. Արձանագրված խնդիրներից մեկը ամբիոնի համակարգչի հիշողության ծավալին էր վերաբերվում, ինչը թույլ չէր տալիս պահեստավորել ամբիոնի դասընթացների բոլոր անհրաժեշտ ֆայլերը: Այս խնդիրն արդեն իսկ լուծված է:
 2. Ցանկալի է մասնագիտացված կաբինետները և լաբորատոր սենյակները համալրել նոր և ժամանակակից պարագաներով ու սարքավորումներով, որը դրականորեն կանդրադառնա ուսանողների կողմից հմտությունների ձեռք բերման վրա, ինչպես նաև նրանց թույլ կտա կատարել գիտահետազոտաան աշխատանքեր՝ դասախոսների ղեկավարությամբ:
 3. Ամբիոնին անհրաժեշտ է ունենալ տպող և պատճենող սարք՝ վարչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար:
- «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ն հանդիսանում է «Ախտաբանական անատոմիա» և «Դատական բժշկություն» դասընթացների կլինիկական բազան: Այս բուժաստատությունը համավարակի պայմաններում կորոնավիրուսային հիվանդության բուժմամբ էր զբաղվում: Սակայն կառավարության որոշմամբ 2022թ. մայիսի 16-ից այս կենտրոնը վերապրոֆիլավորվեց՝ վերադառնալով մինչքովիդյան իրավիճակին: 2021-22 ուս. տարվա գարնանային կիսամյակի ավարտին արդեն իսկ համալսարանի IV կուրսի ուսանողները հնարավորություն ունեցան ներկա լինել դիախերձումներին «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ում, որը ևս պլանավորվեց և կազմակերպվեց ԱԲՀ ղեկավարության, ադմինիստրացիայի և կուրսղեկների համատեղ ջանքերի շնորհիվ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ համավարակի պայմաններում «ախտաբանական անատոմիա» դասընթացը նրանց մոտ դասավանդվել էր հեռավար:

Հետազոտությունների հիմնական ուղղությունները և ձեռքբերումները

«Բժշկական սաքանական առարկաների» ամբիոնը միշտ աչքի է ընկել իր ՊԴ կազմի ակտիվ գիտական գործունեությամբ:

- 2021-2022 ուս.տարում ամբիոնի դասախոսները մասնակցել են կոնֆերանսների, անցել վերապատրաստումներ, խմբագրել են գրքեր, գրքերի գլուխներ, տպագրել են բազմաթիվ գիտական հոդվածներ, թեզիսներ՝ տարբեր ամսագրերում և ժողովածուներում (**ՀԻՄՔ՝ էլեկտրոնային հղումներ և մասնակցության հավաստագրեր**):

Գրքեր

1. Egamberdieva D., Birkeland N.-K., Li W.-J. (**Panosyan H.**) 2021. Microbial Communities and their Interactions in the Extreme Environment. Springer Nature Singapore Pte Ltd, 341 pages.
2. Singh R.P., Manchanda G., Bhattacharjee K. (**Panosyan H.**) 2021. Microbes in Microbial Communities Ecological and Applied Perspectives. Springer Nature Singapore Pte Ltd, 370 pages.

3. Singh R.P., Manchanda G., Bhattacharjee K. (**Panosyan H.**) 2022. Microbial Syntrophy Mediated Eco-enterprising, Elsevier, Academic Press, 346 pages.

Գրքի գլուխներ

1. Margaryan A. (**Panosyan H.**) Extremophiles Thriving in Extreme Ecosystems of Armenia. // Extreme Environments. Unique Ecosystems – Amazing Microbes (1st ed). Eds. Pandey A., Sharma A. CRC Press. Taylor & Francis Group, LLC 2021, p. 234-251 <https://doi.org/10.1201/9780429343452>, 18 pages.
2. Margaryan A., Birkeland NK. (**Panosyan H.**) Heavy Metal Resistance in Prokaryotes: Mechanism and Application. // Microbial Communities and their Interactions in the Extreme Environment. Microorganisms for Sustainability, Eds. Egamberdieva D., Birkeland NK., Li WJ., Panosyan H., vol 32. Springer, Singapore, 2021, p. 273-313, https://doi.org/10.1007/978-981-16-3731-5_13, 41 pages.
3. Dzhuraeva M.M., Margaryan A.A., Ratnadevi C.M., Birkeland NK., Bobodzhanova K.I. (**Panosyan H.**) Microbial Diversity of High-Altitude Geothermal Springs in Tajikistan // Microbial Communities and their Interactions in the Extreme Environment. Microorganisms for Sustainability, Eds. Egamberdieva D., Birkeland NK., Li WJ., Panosyan H., vol 32. Springer, Singapore, 2021, p. 43-63, [10.1007/978-981-16-3731-5_3](https://doi.org/10.1007/978-981-16-3731-5_3), 21 pages.
4. Saghatelyan A., Birkeland N.K. (**Panosyan H.**) The Genus Thermus: A Brief History of Cosmopolitan Extreme Thermophiles: Diversity, Distribution, Biotechnological Potential and Applications. // Microbial Communities and their Interactions in the Extreme Environment. Microorganisms for Sustainability, Eds. Egamberdieva D., Birkeland NK., Li WJ., Panosyan H., vol 32. Springer, Singapore, 2021, p. 141-175, doi.org/10.1007/978-981-16-3731-5_8, 35 pages.
5. Sargsyan R.R., Tsurykau A. (**Panosyan H.**) Lichen Microbiome: Diversity Biological Role and Biotechnological Application. Microbes in Microbial Communities: Ecological and Applied Perspectives. Eds. Singh R.P., Manchanda G., Bhattacharjee K., Panosyan H. Springer, Singapore, 2021, p. 195-213, https://doi.org/10.1007/978-981-16-5617-0_9, 18 pages.
6. Tadevosyan M., Yeghiazaryan S., Ghevondyan D., Saghatelyan A., Margaryan. (**Panosyan H.**) Microbial thermostable hydrolases (amylases, lipases, and keratinases) and polymerases: biology and applications. Elsevier Academic Press, 2022 p. 177-204.

Հոդվածներ

1. Казарян К.В., Пилипосян Т.А., Унанян Н.Г., Чибухчян Р.Г. 2021. Особенности электрической активности среднего сегмента маточной трубы. *Проблемы современной науки и образования*, 3(160): 6-15.
2. Казарян К.В., Пилипосян Т.А., Унанян Н.Г., Чибухчян Р.Г. 2021. Сравнительный анализ спонтанной электрической активности маточных труб крысы. *Доклады НАН РА*, 121(2): 142-147.
3. Казарян К.В., Унанян Н.Г., Чибухчян Р.Г., Пилипосян Т.А. 2021. Сравнительный анализ спонтанной электрической активности проксимальных областей парных гладкомышечных органов: репродуктивная и мочевая системы. *Проблемы современной науки и образования*, 9(166): С 5-12.
4. Казарян К.В., Унанян Н.Г., Пилипосян Т.А., Чибухчян Р.Г., Мкртчян А.В. Регуляция электрического ритмогенеза правой фаллопиевой трубы пейсмекерной активностью левого рога. 2022. *The scientific heritage*, N 89, С 27-30. DOI: 10.5281/zenodo.6575748 <https://zenodo.org/record/6575748#.YpmvXEрVzIU>.
5. Казарян К. В., Унанян Н.Г., Пилипосян Т.А., Чибухчян Р.Г., Мкртчян А.В. 2022. Взаимосвязь электрической активности фаллопиевых труб с телом матки у крыс. *MEDICUS*, 4 (46): С 6-15. <https://elibrary.ru/item.asp?id=49169104>.

6. Jiang H., Huang J., Li L., Huang L., Manzoor M., Yang J., Wu G., Sun X., Wang B., Egamberdieva D., **Panosyan H.**, Birkeland N.-K., Zhu Z., Li W. **2021**. Onshore soil microbes and endophytes respond differently to geochemical and mineralogical changes in the Aral Sea. *Science of The Total Environment*, 765: 142675. doi.org/10.1016/j.scitotenv.2020.142675
7. **Panosyan H.**, Margaryan A. **2021**. Extremophiles Thriving in Extreme Ecosystems of Armenia, In: *Extreme Environments Unique Ecosystems – Amazing Microbes*, CRC Press, pp. 234-252.
8. Saghatelyan A., Margaryan A., **Panosyan H.**, Birkeland N.-K. **2021**. Microbial Diversity of Terrestrial Geothermal Springs in Armenia and Nagorno-Karabakh: A Review. *Microorganisms*, 9(7): 1473. doi.org/10.3390/microorganisms9071473.
9. Saghatelyan A., **Panosyan H.**, Trchounian A., Birkeland N.-K. **2021**. Characteristics of DNA polymerase I from an extreme thermophile, *Thermus scotoductus* strain K1. *MicrobiologyOpen*, 10(1): 1149. DOI: 10.1002/mbo3.1149.
10. Razmik Sargsyan, Arsen Gasparyan, Gohar Tadevosyan. (**Panosyan H.**) **2021** Antimicrobial and antioxidant potentials of non-cytotoxic extracts of corticolous lichens sampled in Armenia. *AMB Express*, 11, 110 doi.org/10.1186/s13568-021-01271-z.
11. Margaryan, A.; Birkeland, N.-K. (**Panosyan H.**) **2021** Anoxybacillus karvacharensis sp. nov., a novel thermophilic bacterium isolated from the Karvachar geothermal spring in Nagorno-Karabakh. *Int. J. Syst. Evol. Microbiol.*;71(10):005035 DOI 10.1099/ijsem.0.005035.
12. Traube F.R., Brandmayr C., Wagner M., Carell T. (**Panosyan H.**) tRNA modification profiles in obligate and moderate thermophilic bacilli. **2022** *Extremophiles* ,26,11, <https://doi.org/10.1007/s00792-022-01258-z>.
13. Тадевосян Л.Ж., Погосян М.В., Даниелян М.А., **Степанян А.Ю.**, **Минасян А.Л.**, Аветисян З.А., Саркисян Дж. С. **2021**. Синаптические постстимульные процессы в антиноцицептивном околосинаптическом сером веществе мозга при активации большого ядра шва на модели болезни Паркинсона в условиях протекции синэстролом. *Медицинская наука Армении* 61(3): 38-49.
14. Тадевосян Л.Ж., Погосян М.В., **Степанян А.Ю.**, Даниелян М.А., **Минасян А. Л.**, Саркисян Дж. С. **2021**. Синаптические постстимульные проявления активности в антиноцицептивном большом ядре шва мозга при активации околосинаптического серого вещества мозга на модели болезни Паркинсона в условиях протекции меланином. *Медицинская наука Армении*, 61(2): 44-55.
15. Хачатрян Л.М., Погосян М.В., Даниелян М.А., Аветисян З.А., **Минасян А.Л.**, **Степанян А.Ю.**, Саркисян Дж.С. **2022**. Микроэлектрофизиологическое изучение соотношения возбудительных и тормозных синаптических процессов в кортикальной проекции к SNc на модели болезни Паркинсона. *Медицинская наука Армении НАН РА*, т. LXII, № 1, с.83-90.
16. Musheghyan G.Kh., Poghosyan M.V., **Minasyan A.L.**, **Stepanyan H.Y.**, Sarkissian J.S. **2022**. Synaptic Processes in Raphe Magnus Nucleus under Activation Periaqueductal Gray Matter on the Model of Parkinson's Disease. *J Biotechnology App*, No. 1(issue 1), pp. 1-8.
17. Musheghyan G.Kh., Poghosyan M.V., Danielyan M.H., **Stepanyan H.Y.**, Sarkissian J.S. **2022**. The synaptic processes in periaqueductal gray matter under activation of locus coeruleus on the rotenone model of Parkinson's disease. *New Armenian Medical Journal*.
18. Avagimyan A, **Sukiasyan L**, Kakturskiy L, Mkrtchyan L, Chavushyan V. Diabefit as a Modifier of Fructose-induced Impairment of Cardio-vascular System. **2021**. *Curr Probl Cardiol.*, 24:100943. doi: 10.1016/j.cpcardiol.2021.100943.
19. Авагимян А, **Сукиасян Л.** **2021**. Молекулярные механизмы нарушений кардиоваскулярного морфогомеостаза при диабетической кардиомиопатии. *Медицинские новости Грузии*, (315):99-103.3.
20. **Sukiasyan L.** **2021**. Fructose-Induced Alteration of the Heart and Vessels Homeostasis. *Curr Probl Cardiol.*, 9:101013. doi: 10.1016/j.cpcardiol.2021.101013. Epub ahead of print. PMID: 34637847.
21. **Сукиасян Л.М.** Фруктозоиндуцированная токсичность: рациональность применения фитосбора. *Медицинская наука Армении*. т. LX, No 4, 43-55.
22. Бабаханян М.А., Оганесян Л.Э., Калачян Л.М., Нагапетян Х.О., Закарян Ш.С., Гюльназарян Ш.А., Гукасян А.Г., **Сукиасян Л.М.** Регулирование содержания микроэлементов в пищевом растительном сырье. *Медицинская наука Армении*. т. LX, No 4, 67-78.

23. Мушегян Г.Х., **Араджян Г.М.**, Погосян М.В., Саркисян Дж.С. **2021.** Динамика импульсной активности нейронов вентрального постеролатерального ядра (vpl) таламуса крыс в ответ на стимуляцию соматосенсорной коры на модели болезни паркинсона. *Ученые записки крымского федерального университета имени в. и. вернадского, биология. химия Научный журнал.* Том 7 (73), № 1; стр. 111-124.

Վերապատրաստումներ

- 2021-2022 ուս. տարվա ընթացքում ևս ամբիոնի ՊԴ կազմը ակտիվորեն մասնակցել է ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտոր Ա. Գյոզալյանի նախաձեռնությամբ կազմակերպված բոլոր միջոցառումներին:
- Հաշվետու տարում «Բաբելոն» լեզվի կենտրոնը անգլերեն լեզվի վերապատրաստման դասեր անցկացրեց ԱԲՀ դասախոսների համար: «Բժշկականսաբանական առարկաների» ամբիոնի 7 դասախոսներ՝ Ն. Հունանյանը, Ա. Մինասյանը, Ն. Խլդաթյանը, Հ. Սիրաեդարյանը, Հ. Հովհաննիսյանը, Հ Ստեփանյանը, Դ. Սողոմոնյանը մասնակցեցին վերապատրաստմանը և բարեհաջող ավարտեցին անգլերեն լեզվի դասընթացի B2 կամ C1 մակարդակը (**ՀԻՄՔ՝ մասնակցության հավաստագրեր՝ տրված 17.06.2022թ**):
- **Հ.Ս. Հովհաննիսյան** – մասնակցություն «Էխսորտագրություն» կատարելագործման դասընթացին, 10.01.2022- 25.02.2022, ԵՊԲՀ (**ՀԻՄՔ՝ մասնակցության հավաստագիր՝ տրված 25.02.2022թ**):

Այլ գիտատեսակական ձեռքբերումներ

- 2021-2022 ուս.տարվա ապրիլ- մայիս ամիսներին Բելառուսի հանրապետության Գրոդնոյի բժշկական համալսարանի հետ **համագործակցության շրջանակներում** կազմակերպվեց և անց կացվեց «Բժշկական բուհերում օտարալեզու ուսանողներին՝ անգլերեն լեզվով տարբեր առարկաների դասավանդման փորձի փոխանակում» նախագիծը: ԱԲՀ «Բժշկականսաբանական առարկաների» ամբիոնի դասախոս Հ. Յու. Ստեփանյանը, համագործակցության շրջանակներում, Գրոդնոյի բժշկական համալսարանի օտարալեզու ուսանողներին հեռավար դասախոսությամբ ներկայացրեց «Զգայական կամակարգերի ընդհանուր ֆիզիոլոգիա» թեման: Գրոդնոյի բժշկական համալսարանի նորմալ ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր, Վ.Վ. Զինչուկն, իր հերթին, կազմակերպեց ամբիոնի դասախոսների կողմից՝ ԱԲՀ ուսանողների համար «Մարսողության ֆիզիոլոգիա» թեմայի հեռավար բացատրությունն ու քննարկումը՝ նրանց մասնակցությամբ:

Մասնակցություն գիտաժողովներին՝ գիտաժողովի նյութեր

1. Морой Р.Е., Асатрян Т.Т., Гайковая Л.Б., **Степанян А.Ю.** Недостаточность глюкозо-6-фосфатдегидрогеназы эритроцитов как причина развития гемолитической анемии. 2022. Конференция: Современные достижения химико- биологических наук в профилактической и клинической медицине Санкт-Петербург, 01–02 декабря 2022 года, с. 33-39.

2. Акобян А. Х., Степанян А. Ю., Саркисян Дж. С. / **Институт традиционной медицины Армении РА, Институт физиологии им. Л. А. Орбели НАН РА/**. 2022. Синаптические процессы в хвостатом ядре-путамене при активации прелимбической коры мозга на ротеноновой модели болезни паркинсона под воздействием яда кобры *paja paja oxiana*. «Современные достижения молодых учёных в медицине – 2022». Сборник материалов IX Республиканской научно-практической конференции с международным участием, 25 ноября 2022 г., Гродно, ГрГМУ.С. 17-19.
3. Арутюнян Ш. А., Степанян А. Ю., Минасян А. Л. / **Институт традиционной медицины Армении РА, Институт физиологии им. Л. А. Орбели НАН РА/**. 2022. Сравнительный анализ рака легких в странах мира и армении. «Современные достижения молодых учёных в медицине – 2022». Сборник материалов IX Республиканской научно-практической конференции с международным участием, 25 ноября 2022 г., Гродно, ГрГМУ. С. 25-28.
4. Мхитарян С. А, Погосян М. В., Степанян А. Ю. / **Институт традиционной медицины Армении РА, Институт физиологии им. Л. А. Орбели НАН РА/**. 2022. Синаптические процессы в большом ядре шва при активации околотоводопроводного серого вещества на ротеноновой модели болезни паркинсона. «Современные достижения молодых учёных в медицине – 2022». Сборник материалов IX Республиканской научно-практической конференции с международным участием, 25 ноября 2022 г., Гродно, ГрГМУ.С. 192-195.
5. Dzhuraeva M., Margaryan A., Birkeland N.K., Bobodzhanova K. (**Panosyan H.**) 2021. Newly isolated thermophilic *Thermus* sp. T84C3 strain from Tamdykul (Tajikistan) geothermal spring. Articles Part 2 of International Scientific and Practical Conference “Biotechnology: Science and Practice, Innovation and Business”, October 20-21, Yerevan, Armenia, p. 30-34.

Մասնակցություն գիտաժողովներին ` գիտաժողովի թեզիսներ

1. **Panosyan H.** Microbial diversity of geothermal springs in Armenia. 2021. Abstract book of International Conference on Microbiology “Biology and Biotechnology of Microorganisms”, September 16-17, Tashkent, Uzbekistan, p. 33.
2. Margaryan A.A., Ghevondyan D.H., Birkeland N.K. (**Panosyan H.**) 2021. Diversity of heavy-metal resistant microbes in Armenia and it’s applications. Abstract book of International Conference on Microbiology “Biology and Biotechnology of Microorganisms” , September 16-17, Tashkent, Uzbekistan, p. 34.
3. **Panosyan H.** 2021. Microbial diversity of terrestrial geothermal springs in Armenia and Nagorno-Karabakh. Abstracts. Part 1 of International Scientific and Practical Conference “Biotechnology: Science and Practice, Innovation and Business”, October 20-21, Yerevan, Armenia, p. 60

Անդամակցություն գիտական կազմակերպություններին

- Նաիրա Հունանյան – ՀՀ ֆիզիոլոգիական ընկերություն,
- Նաիրա Հունանյան – «FENS» ֆեդերացիա,
- Նաիրա Հունանյան – Գլխուղեղի հետազոտության միջազգային կազմակերպություն (IBRO),
- Հարություն Ստեփանյան – ՀՀ ֆիզիոլոգիական ընկերություն,
- Հարություն Ստեփանյան – «FENS» ֆեդերացիա,
- Հարություն Ստեփանյան – Գլխուղեղի հետազոտության միջազգային կազմակերպություն (IBRO),
- Գոհար Արաջյան – ՀՀ ֆիզիոլոգիական ընկերություն,
- Գոհար Արաջյան – «FENS» ֆեդերացիա,
- Գոհար Արաջյան – Գլխուղեղի հետազոտության միջազգային կազմակերպություն (IBRO),

1. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Այս ուղղությամբ ամբիոնի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Գործողություն 1.1 ՊԴ կազմի վերապատրաստման հնարավոր ուղիների որոնում

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի դասախոսական կազմը մասնակցել է համալսարանի կողմից կազմակերպված անգլերեն լեզվի վերապատրաստման դասերին (***ՀԻՄՔ՝ ամբիոնի ՊԴ կազմից 7 մասնակիցների հավաստագրեր, B2 կամ C1 մակարդակ, տրված 17.06.2022թ***):

Գործողություն 1.4 Դասախոսության, ուսումնական նյութերի վերանայում և արդիականացում

2021-2022 ուս. տարում հերթական անգամ վերանայվել են «Բժշկակենսաբանական առարկաների» ամբիոնում դասավանդվող դասընթացների նյութերը՝ դասախոսություններ, դրանց PPT ֆայլեր, ԱԲՀ գրադարանում ուսումնական նյութերի առկայությունն ու հասանելիությունը ուսանողներին: Պարբերաբար թարմացվում է նաև էլեկտրոնային բազան:

Գործողություն 1.5. Դասալսումների և փոխադարձ դասալսումների կազմակերպման, թերությունների հայտնաբերման և քննարկման միջոցով ուսուցման որակի բարելավում

▪ 2021 -22 ուս. տարվա աշնանային կիսամյակում «Բժշկակենսաբանական առարկաների» ամբիոնում պլանավորվել են 11, իրականացվել՝ 10 դասալսումներ՝ ամբիոնի վարիչի և դասախոսների, ուս. մասի վարիչ Ա. Սարգսյանի, դեկան Ա. Կարապետյանի կողմից ***/ՀԻՄՔ՝ Բժշկակենսաբանական առարկաների ամբիոն, ԳՈՐԾ 7՝ 2021-2022 ուս.տարի, դասալսման ժամանակացույց և դասալսման արձանագրություններ, աշնանային կիսամյակ/***: Կատարված բոլոր դասալսումների արձանագրությունները ժամանակին կազմվել և հանձնվել են ամբիոն, դիտողություններն, առաջարկություններն ու թերությունները քննարկվել են ամբիոնի համապատասխան նիստերի ընթացքում ***/ՀԻՄՔ՝ Բժշկակենսաբանական առարկաների ամբիոն, 2021-2022 ուս.տարի, ամբիոնի թիվ 4 և 5 նիստերի արձանագրություններ դասալսումների քննարկումների վերաբերյալ/***: «Տեղագրական անատոմիա» առարկայից դասալսում ուս. մասի գծով պրոռոկտոր, բ.գ.դ., պրոֆ. Ա.Լ. Մինասյանի մոտ ***չի իրականացվել***: Առաջարկվել է, որ բ.գ.դ., պրոֆ. Ա. Մինասյանը կազմակերպի ***բաց դասեր***, որոնց մասնակցեն համալսարանի երիտասարդ դասախոսները:

2021 -22 ուս. տարվա գարնանային կիսամյակում «Բժշկակենսաբանական առարկաների» ամբիոնում պլանավորվել են 9, իրականացվել՝ 8 դասալսումներ՝ ամբիոնի վարիչի և դասախոսների, ուս. մասի վարիչ Ա. Սարգսյանի, դեկան Ա. Կարապետյանի կողմից (***ՀԻՄՔ՝ Բժշկակենսաբանական առարկաների ամբիոն, ԳՈՐԾ 7՝ 2021-2022 ուս.տարի, դասալսման ժամանակացույց և դասալսման արձանագրություններ, գարնանային կիսամյակ***): Կատարված բոլոր դասալսումների արձանագրությունները ժամանակին կազմվել և հանձնվել են ամբիոն, դիտողություններն, առաջարկություններն ու

թերությունները քննարկվել են ամբիոնի համապատասխան նիստերի ընթացքում / **ՀԻՄՔ՝ Բժշկակենսաբանական առարկաների ամբիոն, 2021-2022 ուս.տարի, ամբիոնի թիվ 8, 9, 10, 11 նիստերի արձանագրությունները դասալսումների քննարկումների վերաբերյալ /:**

Հ. Յու. Ստեփանյանի մոտ դասալսում չի կատարվել «Նորմալ ֆիզիոլոգիա» առարկայից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ փետրվար ամսին ամբիոնի դասախոսների մեծամասնությունը ամբիոնի վարիչի և ղեկանի, ուս. մասի վարիչի հետ արդեն իսկ ներկա են գտնվել նրա կողմից կազմակերպված **բաց դասին / II կուրս, 201 խումբ/:** Թեման՝ «Սրտի ֆիզիոլոգիա»: Ն. Խլղաթյանը ևս կազմակերպել է **բաց դաս / I կուրս, 102 խումբ/**, որին ներկա են եղել ամբիոնի վարիչը, դասախոսները, ուս. մասի վարիչ Ա. Սարգսյանը և ղեկան Ա. Կարապետյանը: Թեման՝ «Իգական սեռական համակարգ»: Այսպիսով, գարնանային կիսամյակում «Բժշկակենսաբանական առարկաների» ամբիոնում **2 բաց դասեր են իրականացվել:** 2021թ հունվար-փետրվար ամիսներին ձևավորված հանձնաժողովն **ԱԲՀ ամբիոնների՝ վերջին 3 ուս տարիների գործունեության մշտադիտարկում** իրականացրեց: Ամբիոնների գործունեության ուսումնասիրությունների արդյունքում առաջարկվեց բաց դասեր անց կացնել, որոնք արդեն իսկ գարնանային կիսամյակում իրականացվեցին ամբիոնի դասախոսների կողմից:

- II և III կուրսերում (301, 302, 204 խմբեր) ներկա գտնվելով «Մանրէաբանության» դասերին և վերահսկելով ուսումնական գործընթացը՝ ամբիոնի վարիչ Ն. Հունանյանը, ամբիոնի դասախոս, մանրէաբանության մասնագետ Հ.Հ. Փանոսյանի հետ նոր ընդունված դասախոս Դ.Ռ. Սողոմոնյանին դասախոսությունների և գործնական պարապմունքների անցկացման վերաբերյալ մեթոդական խորհրդատվություններ են տվել :

Գործողություն 1.6. Ամբիոնի կադրային ներուժի բարելավում

- ՊԴ կազմի համալրումը բարձրակարգ մասնագետներով իրականացվում է մրցույթային հիմունքներով և ըստ պահանջի: Հաշվետու տարում Դ. Սողոմոնյանը և Հ. Սիրաեդարյանն են միացել ամբիոնի ՊԴ անձնակազմին (**ՀԻՄՔ՝ աշխատանքային պայմանագրեր, ՄՌԿ բաժին**): Հ. Սիրաեդարյանն ունի ավելի քան 20 տարվա մասնագիտական փորձ մաշկային հիվանդությունների ախտորոշման ոլորտում և այժմ էլ ԱԲՀ-ում դասավանդումը համատեղում է իր՝ «Հիստոլոգիա» պաթոլոգիայի հայ-գերմանական գիտագործնական կենտրոնում աշխատանքի հետ: Դ. Սողոմոնյանը ՀՀ ԱՆ «Պրոֆ. Ռ.Հ. Յոյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի «Մանրէաբանական և արտադրանքի որակի վերահսկողության» լաբորատորիայի ղեկավարն է, դասավանդել է նաև ԵՊՀ կենսաբանական ֆակուլտետում և «Հայբուսակ» համալսարանում:
- Ամբիոնի դասախոսները պարբերաբար իրականացվող վերապատրաստումների արդյունքում բարելավում են ինչպես իրենց մասնագիտական, այնպես էլ մանկավարժական և անգլերեն լեզվի գիտելիքները (**ՀԻՄՔ՝ վերապատրաստման հավաստագրերի կրկնօրինակներ, անձնական գործեր, ՄՌԿ բաժին**):

Գործողություններ 1.7. և 1.8. Ամբիոնի նյութատեխնիկական բազայի արդիականացում: Ամբիոնի գործնական պարապմունքների իրականացման համար նախատեսված սենյակների

վերագինում՝ անհրաժեշտ գործիքների, սարքավորումների և ուսումնական նյութի ձեռք բերում (նորոգում):

Այս ուղղություններով լայնամասշտաբ բարեփոխումներ են պլանավորվում գալիք տարիներին՝ ԱԲՀ նոր մասնաշենքի շահագործումից հետո:

Գործողություն 1.9. Ամբիոնային աշխատանքների պլանավորում և համակարգում

Ամբիոնային աշխատանքների պլանավորումը և համակարգումն իրականացվել է հավետու ժամանակահատվածի ընթացքում անընդհատ՝ ներառելով կարճաժամկետ և միջնաժամկետ պլանավորումները: Իրականացվել է հերթապահությունների, դասալսումների անցկացման, կիսամյակային միջանկյալ և ամփոփիչ քննությունների, և այլ հարցերի պլանավորում և իրականացում (**ՀԻՄՔ՝ Բժշկակենսաբանական առարկաների ամբիոն, 2021-2022 ուս.տարի, ամբիոնի նիստերի 11 արձանագրություններ**):

Գործողություն 1.11. Մասնակցություն ԱԲՀ-ի գիտական խորհրդի նիստերին

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնը մասնակցել է գիտական խորհրդի նիստերին, որոնց քննարկումներին ամբիոնը ցուցաբերել է ակտիվ մասնակցություն նիստերի օրակարգերում քննարկվող տարբեր հարցերի վերաբերյալ (**ՀԻՄՔ՝ ԱԲՀ գիտխորհրդի նիստերի արձանագրություններ**):

Գործողություն 1.12. Միջամբիոնական փոխադարձ դասալսումների պլանավորում և անցկացում՝ փորձի փոխանակում

Հաշվետու ժամանակաշրջանում միջամբիոնական փոխադարձ դասալսումներ չեն իրականացվել: Հաջորդ՝ 2022-23 ուս. տարում պլանավորվում է իրականացնել՝ նախօրոք պայմանավորվածություն ձեռք բերելով «Թերապևտիկ» և «Վիրաբուժական» առարկաների ամբիոնի վարիչների և դասավանդող համապատասխան մասնագետների հետ:

Գործողություն 1.13. Էլեկտրոնային և տպագիր մասնագիտական գրականությամբ գրադարանի համալրում

Գրադարանի համալրումը կարևորագույն խնդիր է՝ ուղղված ԱԲՀ-ում ուսումնական գործընթացի բարելավմանը: 2021-2022 ուս. տարում հերթական անգամ վերանայվել են «Բժշկակենսաբանական առարկաների» ամբիոնում դասավանդվող դասընթացների նյութերը (հիմնականում՝ դասախոսությունների ամբիոնական մշակումները), դասախոսների կողմից կրկին ստուգվել է ԱԲՀ գրադարանում ուսումնական նյութերի առկայությունն ու հասանելիությունը ուսանողներին: Թարմացվել է նաև էլեկտրոնային մասնագիտական գրականության բազան:

2. ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս ուղղությամբ ամբիոնի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Գործողություն 2.3. Խորհրդատվությունների կազմակերպում, անցկացում

- Հաշվետու ժամանակահատվածում կազմվել և հաստատվել են ամբիոնի հերթապահության գրաֆիկները՝ աշնանային և գարնանային կիսամյակների համար:

Խորհրդատվություններն իրականացվել են ըստ սահմանված հերթապահության գրաֆիկների: Բացի այդ, խորհրդատվություններ տրամադրվել են նաև այլ օրերին՝ ելնելով ուսանողների պահանջից (*ՀՐՄՔ՝ 2020-2021 ուս.տարվա խորհրդատվությունների մատյանի համապատասխան գրանցումներ*): Դասախոսների կողմից տրվել են լրացուցիչ բացատրություններ, նշվել են գրականության այն հղումները, որոնք կօգնեն ուսանողի կողմից նյութի ավելի լավ ընկալմանը: Խորհրդատվություններ են տրվել նաև անհատական աշխատանքների կատարման ուղղությամբ, ինչպես նաև՝ միջանկյալ և ամփոփիչ քննություններից առաջ՝ անհասկանալի հարցերի քննարկման և քննություններին նախապատրաստման համար:

- Խորհրդատվություններ տրամադրվում են նաև կուրսի խորհրդատուների կողմից: 2021-2022 ուս. տարում ամբիոնի վարիչ Ն. Հունանյանը, լինելով 401 և 402 խմբերի խորհրդատուն, բազում հանդիպումներ է ունեցել ուսանողների հետ, ներկայացրել համալսարանում գործող կարգերը / դրանց փոփոխությունները, քննարկել ուսանողների առաջադիմությունը, հետևել նորմալ հաճախումներին, քննարկել տարբեր առարկաներից ձեռք բերած ամփոփիչ միավորները, խմբերի առաջադիմությունը և այլն: Անհրաժեշտության դեպքում խմբերը հանդիպել են նաև դեկան Ա. Կարապետյանի և ուսումնական մասի այլ ներկայացուցիչների հետ: Քննարկվել են ուսանողներին հուզող բազմաբնույթ այլ հարցեր (*ՀՐՄՔ՝ 2020-2021 ուս.տարվա 401 և 402 խմբերի խորհրդատուի մատյանների համապատասխան գրանցումներ*):

Գործողություն 2.4. Ուսանողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների գնահատման ձևերի, ընթացակարգերի, չափանիշների պարբերական քննարկումներ

«Բժշկակենսաբանական առարկաների» ամբիոնի նիստերի քննարկումներում մշտապես ուշադրության կետրոնում են նաև գնահատման հետ կապված հարցերը, բարելավման ուղիների որոնումն ու առաջարկների ներկայացումը: ԱԲՀ –ում գործող բազմաբաղադրիչ գնահատման համակարգը ներառում է այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են ուսանողների հաճախումները (16 միավոր), ընթացիկ ակտիվությունը (20 միավոր), անհատական աշխատանքների ներկայացումը (14 միավոր), միջանկյալ (25+25 միավոր) կամ ամփոփիչ (50 միավոր) քննություններից ձեռք բերված միավորները: Հաշվի առնելով ԱԲՀ ուսանողների, ինչպես նաև դասախոսների կարծիքները, «Բժշկակենսաբանական առարկաների» ամբիոնը հանդես է եկել առաջարկությամբ. Ժամանակի սղությունը թույլ չի տալիս մանրակրկիտ ստուգել ու գնահատել ուսանողի կողմից ներկայացված երկու անհատական աշխատանք՝ յուրաքանչյուր կիսամյակի կտրվածքով: Նաև՝ ուսանողներն են դժվարանում ամեն առարկայից պատրաստել և ներկայացնել երկու որակյալ աշխատանքներ: Իհարկե, սա պարտադիր բաղադրիչ չէ, ուսանողն ինքն է ընտրում՝ ներկայացնել անհատական աշխատանքներ թե ոչ, և քանիսը ներկայացնել՝ մեկը թե երկուսը: Բայց այնուամենայնիվ, նրանք չեն էլ ուզում հրաժարվել այս բաղադրիչին հատկացված միավորներից և ստիպված են ժամանակ տրամադրել և կատարել այս աշխատանքը... Առաջարկվել է թողնել միայն մեկ անհատական աշխատանք՝ տալով առավելագույնը 14 միավոր: Կամ անհատական աշխատանքների քանակը թողնել դասախոսի հայեցողությանը. թող դասախոսը որոշի՝ ելնելով նաև առարկայի առանձնահատկություններից և հատկացված ժամաքանակից: /ՀՐՄՔ՝

Բժշկական սաբանական առարկաների ամբիոն, 2021-2022 ուս. տարի, 2021թ. սեպտեմբերի 29-ի նիստի արձանագրություն, կետ 5/:

3. ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Այս ուղղությամբ ամբիոնի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Գործողություն 3.3. Ընդլայնել ամբիոնի դասախոսական կազմի կողմից հրատարակվող գիտական հոդվածների քանակը

- 2021-22 ուս. տարվա ընթացքում «Բժշկական սաբանական առարկաների» ամբիոնի ՊԴ կազմը մասնակցել է հանրապետական և միջազգային կոնֆերանսներին, անցել վերապատրաստումներ, տպագրել է գիտական հոդվածներ, թեզիսներ տարբեր ամսագրերում և ժողովածուներում, խմբագրել գրքեր և գրքերի գլուխներ: **(ՀԻՄՔ՝ ամբիոնի գիտական գործունեության՝ դասախոսների հոդվածների, թեզիսների, կոնֆերանսների մասնակցության մասին տեղեկություններ ԱԲՀ գիտական մասի համակարգում):** Այս աշխատանքների քանակը զգալիորեն աճել է նախորդ տարիների համեմատ, որն իհարկե, ողջունելի է:
- Պետք է նշել նաև ԱԲՀ ուսանողների և ամբիոնի դասախոսների (Հ. Ստեփանյան, Ա. Մինասյան) ներգրավումը Բելառուսի Հանրապետության Գրոդնոյի պետական բժշկական համալսարանի կազմակերպած՝ «Բժշկության ոլորտում երիտասարդ գիտնականների ժամանակակից ձեռքբերումները - 2022» IX գիտա-գործնական, միջազգային մասնակցությամբ հանրապետական կոնֆերանսին: Մեր ուսանողները, դասախոսների ղեկավարմամբ, նյութեր ներկայացրեցին այս գիտաժողովում, որոնք (թվով 3 աշխատանք) տպագրվեցին 2022թ նոյեմբերի 25 -ին հրատարակված համապատասխան ժողովածուում /«Современные достижения молодых учёных в медицине – 2022». Сборник материалов IX Республиканской научно-практической конференции с международным участием, 25 ноября 2022 г., Гродно, ГрГМУ/:

4. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Այս ուղղությամբ ամբիոնի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Գործողություն 4.1. Ուսանողների հետ հետադարձ կապի ապահովման բարելավում Տ՛ես 2.3. կետը (կուրսի խորհրդատուների գործունեության վերաբերյալ)

Գործողություն 4.2. Մասնակցություն ներհամալսարանական ՈԱ միջոցառումներին

- Ամբիոնը հաշվետու ժամանակահատվածում մասնակցել է Համալսարանի ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտոր Ա. Գյոզայանի կողմից կազմակերպած հանդիպում- քննարկումներին:
- Համալսարանում գործող որակի ներքին ապահովման համակարգի պատասխանատուների կողմից ներկայացվել են «Ուսումնական գործընթացն ապահովող ռեսուրսներից և տրամադրվող ծառայություններից ուսանողների բավարարվածության հարցման վերլուծության» և «Ամբիոնի 3 տարվա գործունեության մշտադիտարկման» արդյունքները,

որոնք ակտիվորեն քննարկվել են «Բժշկական սավանական առարկաների» ամբիոնի 2022 թ. մայիսի 13-ին կայացած թիվ 10 նիստում, համապատասխան առաջարկները ներկայացվել են ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտոր Ա. Գյոզալյանին *(ՀԻՄՔ՝ Բժշկական սարանական առարկաների ամբիոն, 2021-2022 ուս. տարի, ամբիոնի թիվ 10 նիստի արձանագրություն):*

«ԲԺՇԿԱԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ»

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝

կ.գ.թ. Ն.Գ. ՀՈՒՆԱՆՅԱՆ

Պաշտոնական փաստաթուղթը գտնվում է համալսարանում